

Էլեկտրաէներգետիկական շուկային լիցենզավորված անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկա

Սույն մեթոդիկայի համաձայն հաշվարկվում են հաշվարկային և պայմանագրային կենտրոնների և համակարգի օպերատորի ծառայությունների սակագները (ծառայության վճարները):

Սակագների հաշվարկը իրականացվում է՝ ելնելով ընկերության անհրաժեշտ հասույթի բավարարման սկզբունքից:

Տարեկան անհրաժեշտ հասույթը շահագործման և պահպանման ծախսերի (ՇԾ), ֆինանսական ծախսերի (ՖԾ) և թույլատրելի շահույթի (ԹՇ) գումարն է.

$$ՏՀ = \text{ՇԾ} + \text{ՖԾ} + \text{ԹՇ} \quad (1)$$

Շահագործման և պահպանման ծախսերը ներառում են նաև հիմնական միջոցների մաշվածությունը, որը հաշվարկվում է գծային եղանակով՝ ելնելով դրանց կյանքի տևողությունից:

Ֆինանսական ծախսերի մեջ ներառվում են վարկերի տոկոսավճարները, հարկերը (բացի ԱԱՀ-ից) և օրենսդրությամբ սահմանված այլ վճարներ:

Թույլատրելի շահույթը հաշվարկվում է որպես ընկերության սեփական կապիտալի և շահութաբերության նորմայի արտադրյալ.

$$\text{ԹՇ} = \text{ՍԿ} * \text{ՇԼ} \quad (2)$$

Սակագների հաշվարկում հանձնաժողովի որոշմամբ կարող են մասամբ կամ ամբողջովին ընդգրկվել նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի ծախսերը, որոնց ֆինանսավորումը չի հաջողվում կամ նպատակահարմար չէ իրականացնել այլ ֆինանսավորման աղբյուրներից: Այդ դեպքում սակագնի հաշվարկում ներառված ծախսերը ապագա սակագնային հաշվարկների առումով կապիտալացման չեն ենթարկվում:

Տարեկան հասույթը (ՏՀ) ձևավորվում է էլեկտրաէներգետիկական ներքին շուկայից և էլեկտրաէներգիայի արտահանումից ստացվող ծառայությունների վճարներից.

$$\text{ՏՀ} = \text{ՏՀ}_G + \text{ՏՀ}_W \quad (3)$$

որտեղ՝

ՏՀ_G – ներքին շուկայից ծառայությունների դիմաց վճարներից գոյացող հասույթն է,

ՏՀ_W - արտահանման համար իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարներից գոյացող հասույթն է:

Ներքին շուկայում ծառայությունների դիմաց վճարները իրականացվում են ամսական հաստատագրված վճարների տեսքով, որը շուկայի պայմանագրի համաձայն իրականացնում է մեծածախ շուկայի գնորդը (ները), իսկ արտահանման համար իրականացված ծառայությունների վճարը կատարվում է արտահանողի կողմից մեկ կվտժ արտահանված էլեկտրաէներգիայի համար հաստատված սակագնով.

$$\text{ՏՀ}_G = 12 * \text{ԱՀԿ} \quad \text{և} \quad \text{ՏՀ}_W = \text{Ս}_W * \text{W}_W \quad (4)$$

որտեղ՝

ԱՅՎ – ներքին մեծածախ շուկայի ամսական հաստատագրված վճարն է (դրամ/ամիս),

Ս_ω - արտահանված էլեկտրաէներգիայի 1 կՎտժ-ի համար սահմանված ծառայության սակագինն է (դրամ/կՎտժ),

W_ω - տարվա ընթացքում պայմանագրերով ամրագրված արտահանվող էլեկտրաէներգիայի քանակն է (կՎտժ):

Էլեկտրաէներգիայի արտահանողներից և ներքին շուկայի մեծածախ գնորդներից ստացվող անհրաժեշտ հասույթի մասնաբաժինները որոշվում են հետևյալ բանաձևերով.

$$S\tilde{Z}_{\omega} = \frac{W_{\omega}}{W_{\tilde{G}} + W_{\omega}} * S\tilde{Z} \quad \text{և} \quad S\tilde{Z}_{\tilde{G}} = \frac{W_{\tilde{G}}}{W_{\tilde{G}} + W_{\omega}} * S\tilde{Z} \quad (5)$$

որտեղ՝

W_Ḡ – տարվա ընթացքում հանրապետության ներքին սպառման համար գնվող էլեկտրաէներգիայի քանակն է:

Հաշվի առնելով (4) և (5) բանաձևերը՝ ներքին սպառման համար մատուցված ծառայության դիմաց մեծածախ գնորդի կողմից ամսական հաստատագրված վճարը կլինի՝

$$ԱՅՎ = \frac{W_{\tilde{G}}}{W_{\tilde{G}} + W_{\omega}} * \frac{S\tilde{Z}}{12}, \quad (6)$$

իսկ արտահանողներին մատուցված ծառայությունների սակագինը՝ 1 կՎտժ արտահանվող էլեկտրաէներգիայի համար կլինի՝

$$U_{\omega} = \frac{S\tilde{Z}}{W_{\tilde{G}} + W_{\omega}} \quad (7)$$

Եթե մեծածախ շուկայում ներքին սպառման համար էլեկտրաէներգիայի գնորդների թիվը մեկից ավելի է, ապա (6) բանաձևով հաշվարկված ամսական հաստատագրված վճարը բաժանվում է գնորդների միջև՝ տարվա ընթացքում նրանց կողմից գնված (պայմանագրային) էլեկտրաէներգիայի քանակին համաչափ:

Էլեկտրաէներգիայի արտահանման երկարաժամկետ, երաշխավորված պայմանագրերի բացակայության դեպքում ընկերության անհրաժեշտ հասույթն ապահովվում է ներքին սպառման հաշվին և սակագները որոշվում են հետևյալ բանաձևերով.

$$ԱՅՎ = \frac{S\tilde{Z}}{12}, \quad U_{\omega} = \frac{S\tilde{Z}}{W_{\tilde{G}}}$$